

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլիարիոյ համար

Տարեկան ֆրբ. 10


Վեցամսեայ " 5

Արտասահման

Տարեկան ֆրբ. 12

Վեցամսեայ " 6

ԿԱՆԻՒԿ

Գրութիւնք եւ չեն
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAZIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱՐԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

Երբ կ'ուզե՛ք «Հայելի» ին մէջ աղոր երեւնալ,

Պարսիք սիրուն եւ սգնիս դէմք մը ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ

(Այսօրուան քղրաքեր)

Պագուցի Պ. Ղուկասեան, Երեւանի մէջ զտնուող թշուառ գաղթական հայերուն բաժնուելու համար Հայոց Բարեգործական ընկերութեան Երեւանի մասնաճիւղին այս անգամ 3000 բուլղի զրկեր է:

— Կարօտելոց յանձնաժողովը որոշել է Սլեբդի սովեալ ազգայնոց ալ 50 լիրա զրկել:

— Ի նպատակ Հայաստանի սովելոց Աֆիօն Գարահիսարէն 30, Ամերիկայի Դօնգօրտ քաղաքէն 12 եւ Վիտէնէն 7 ոսկի զրկուած է Պատրիարքարան: Միևնոյն նպատակաւ ցարդ Եգիպտոսի մէջ հանգանակուած է 350 ոսկի, զոր մինչև 500ի հասցնելու ջանքեր կ'ըլլան եղեր:

— Դատական նախարարութեան մէջ Պոլսուլթուն կ'արտօնէ Հայ Հռոմէականաց Պատրիարքի ընտրութիւնը կատարել Յունիս 24ին:

— Իզմիրէն գրուած նամակէ մը ցաւով կիմանանք թէ Արեւ. Մամուլի տէր և տնօրէն Մամուրեան էֆ. հիւանդ է: Ալեկադր գրագէտը Պուճա փոխադրուել է, օգափոխութեան համար:

— Պետրոս էֆ. Մարկոսեան հոյակապ ջահ մը (հաֆիսէ) մը նուիրել է Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցիին: Այս ջահը համակ բիւրեղեայ, 54 ակնախափ աշտանակներ ունի եղեր, ուրոնք կը շրջապատեն ոսկեղօծ պղնձեայ զարդերը, գեղարուեստական նրբութեամբ և ճարտարութեամբ պատրաստուած:

— Կ. Պոլսոյ Յունաց Պատրիարքարանի Սինօդը որոշել է որ այսուհետեւ Պատրիարքարանի գրագիրները ու պաշտօնեաները կ'ընտրուին: Կըսուի թէ այս որոշումը տրուել է սա պատճառաւ որ, ամուրի կ'ընտրուէին աւելի քիչ ամսականով կրնան գոհանալ:

Պէտք է որ մեր Պատրիարքարան ալ նոյն բանը ընէ, որպէս զի հոն ալ որջացեալ խումբ մը ուսիճները ու տղրուկները մաքրուին:

— Երեքշաբթի օրը գումարուած նը-
պաստից Յանձնաժողովը որոշեց փութով
200 ոսկի ևս ղրկել Վան, ինչպէս նաև
գումար մը Զէյթուն :

— Գրեհական Յանձնաժողովը սնտուկ
մը դասագիրք ղրկեց Կիպրոսի աղգ. որ-
բանոցին :

— Ռօպէրթ Քօլէճի այս տարուան 9
ընթացաւարտներու մէջ կը գտնուին 4
հայ պատանիներ .
Յովհաննէս Ա. Շիշմանեան Պոլսեցի .
Աբրահամ Յ. Բաքըճեան Կեսարացի .
Արմենակ Վիշէնեան Պոլսեցի .
Կարապետ Օրմանեան Արմտանցի .

— Սկիւտարի Ամերիկեան վարժարա-
նի (Հօմ Սքուլ) այս տարուան չորս ըն-
թացաւարտուհիներէն երեքը գաւառա-
ցի հայ աղջիկներ են .

Օր Պայուսու Տայեան, Տարտանելէն .
» Սրբուհի Մալխասեան, Ռօտօսթոյէն
» Ովսաննա Սարգիսեան, Ուրֆայէն :

— Մայիս ամսոյ մէջ Աղգ. Հիւանդա-
նոցի համար եղած նուիրատուութեանց
համագումարն է 14,906 ղրուշ :

— Կըսուի թէ Ղալաթիոյ Կեդրո-
նական վարժարանը Բերա պիտի փո-
խադրուի : Բերայի թաղ. խորհուրդը ա-
մառնային արձակուրդի միջոցին պիտի
բանակցի Ղալաթիոյ Խնամակալութեան
հետ, որպէս զի յառաջիկայ տարեմու-
տին կարելի ըլլայ այս խորհուրդը ի
գլուխ հանել :

— Երուսաղէմի լուսարարապետ Տ.
Սահակ եպիսկոպոս, Խապայեան, որ Ս.
Յակոբայ վանուց մասենադարանի ձե-
ռագիրներուն քննական ընդհանուր
ցուցակը պատրաստելու ձեռնարկած էր,
3000ի մօտ գրչագիրներէն 320 օրի-
նակ ձեռագիրներու ուսումնասիրութիւն-
ներն աւարտել է մէկ տարուան միջո-
ցին :

ԱՌԵԻԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Սելանիկէն կը դրն «Մօնիթօր»

«Սելանիկի շրջանակին մէջ Բէսէն-
տէրէի հանքերուն անանուն ընկերու-
թեան տնօրէն Պ. Շվալիէն աւազակնե-
րը լեռը տարած են անցեալ կիրակի :

Պ. Շվալիէ կէսօրէն ժամ մը առաջ
Իզվօրոս ուղեւորած էր իր կնոջ, տղուն,
երկու լատին քահանաներու և Մուհար-
րէմ ու Խուրչիտ անուն Ալպանիացի եր-
կու գաղաներու հետ : Ամենքն ալ ձի
հեծած էին : Տիկին Շվալիէ որ առջեւէն
կերթար, Կրա հրացանով զինուած ե-
րեք մարդ տեսաւ, որոնք անմիջապէս
իրենց հրացանները անոր վրայ ուղղե-
ցին : «Լուի, բռնուեցանք» ըսաւ կինը :
Նոյն միջոցին եօթը ուրիշ աւազակներ
երեւան ելան և ամենքը պաշարեցին :
Գաղաս Մուհարրէմ որ Շվալիէի 6 տա-
րեկան տղան գրկած էր և ամենէն ե-
տին կը գտնուէր, սկսաւ պոռալ և թէ-
վօրվէրը հանեց, բայց անմիջական կեր-
պով հրացանի գնտակ մը անոր դանկը
ջախջախեց : Մուհարրէմ անկեղծան ձի-
էն վար ինկաւ : Աւազակները տղան ա-
նոր գրկէն առնելով քահանաներուն
յանձնելէ ետքը, մինակ Պ. Շվալիէն
առին տարին : Աւազակապետը ըսաւ
տիկինին թէ, ամուսինը անջնաս պիտի
մնայ և 15,000 ոսկի փրկանքը վճարուե-
լուն պէս պիտի արձակուի :

Սէրէզէն ալ կը գրեն թէ, անց-
եալ շաբթու Տէմիր Հիսարի մէջ ուրիշ
աւազակներ լեռը տարել են երիտա-
սարդ յոյն մը և 200 ոսկի փրկանքով
12 ձեռք հագուստ կը պահանջեն :

Անցեալ կիրակի Բորոյէն քանի մը
աւազակներ եանի—Եամպասի անունով
յոյն մը առեւանդած էին, զոր սպաննե-
ցին, փրկանքն ալ ստանալէ ետքը :

ՀԻՒԱՆՂԱՆՈՑԻ ԿԻՐԱԿԻՆ

Յունիս 11ի կիրակին հանգանակութիւն կը կատարուի Լոնտոնի բոլոր եկեղեցիներուն մէջ, ի նպատակ այդ մեծ մայրաքաղաքին հիւանդանոցներուն: Ուստի այդ կիրակին կը կոչուի «Հիւանդանոցի Կիրակի»:

Անցած տարի, «Հիւանդանոցի Կիրակի» 40,000 անգլ. ոսկի արտադրեր է, և այդ պատկանելի գումարը բաժնուեր է Լոնտոնի այլևայլ հիւանդանոցներու մէջ, որոնցմէ ոմանք վերջին ծայր աննախանձելի վիճակ մը ունին դրամապէս:

Քսանըվեց տարի կընէ «Հիւանդանոցի Կիրակի»ին հաստատուելը, և տարուէ տարի Լոնտոնի ժողովուրդը կը շատցնէ իր նուէրը, պահելու համար գթութեան այն յարկերը, զորս նմանապէս իրենը կոչելու փառքը ունի:

Երկու խօսքով պարզենք սա «Հիւանդանոցի Կիրակի»ին դրութիւնը: Այդ օրը Լոնտոնի բոլոր եկեղեցիներուն մէջ — Լրեաններուն Սինակոկաներն իսկ բացառութիւն չըլլալով — մասնաւոր քարոզներ կը տրուին բացատրելով ողորմութեան ոգին, և ծանրանալով խեղճ, տառապող, ցաւագար հիւանդներու օգնելու պէտքին վրայ: Բրիտանական այդ մեծ մայրաքաղաքին մայր եկեղեցիէն ըսելով է՛ն աննշան աղօթատեղին կը ջանայ իր մասնակցութիւնը ունենալ այդ նուիրատուութեան մէջ: Եւ այդ մասնաւոր պաշտօններէն վերջը յատուկ հանգանակութիւն մը կ'ըլլայ հիւանդանոցներուն ի նպաստ: Տարուէ տարի հրատարակուած ցանկերէն կը տեսնուի թէ խիստ փոքրիկ գումարներ ալ կ'երթան խառնուել պատկանելի համագումարին. բայց վերջապէս ամէն եկեղեցի կ'աշխատի իր մասն ու բաժինը ունենալ այդ հանգանակութեան մէջ:

(Ասկէ կրնայ հասկցուիլ թէ, գթութեան գործը ո՛րքան յաւաստ գացած է Լոնտոնի մէջ:

ՁՈՒԱՐՃԱԼԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ամերիկայի մէջ ագարակատէր մը, օր մը ըստ սովորութեան, հաւերը դուրս կը հանէ ու կը ցրուէ. երեկոյն երբ հաւերը կը վերադառնան, զարմանք կը տեսնէ որ ա-

նոց կտուցները դերձանով կապուած ու պաշերէն ալ մէյմէկ թղթիկ կապուած են, որոնց վրայ գրուած էր հետեւեալը. «Ուրիշ անգամ զմեզ հաւնոցէն դուրս մի՛ հաներ, որովհետեւ ուղղակի դրացիին պարտէզը երթալով ծաղիկները կը կծծենք կոր»:

Բարի դրացին այսպէս փափկութեամբ աղգարարեր է, փոխանակ ուղղակի խօսելու և հետը գծտելու:

ՀԱՄԸ ՓԱԽՈՒՑԻՆ

«Բաժնեգինը առ լուծալով, յառաջիկայով, այս ինչ ճամբորդով կամ այն ինչ էմանէթճիով կը զրկեմ կոր» ըսելով, խմբագրութիւնները խաղցունող կարգ մը բաժանորդները:

Անշահ ու անհամ գրութիւններին տպագրել տալու համար լրագրագետաց գըլխու ցաւ պատճառողները:

Թէ՛ ձրիաճարակութիւն և թէ՛ կոշիկէն վեր գիտողութիւն ու տրտալ ընող կարգ մը իմաստակ պարոնները:

«Այս ամիս, գալ ամիս անպատճառ հարանիքը կընենք» ըսելով, տարիներէ ի վեր երթալ գալուն վերջը չի բերող կարգ մը նշանուած միւսիւնները:

Իրիկունէ իրիկուն խմելիք 4—5 շիշ օղիին փարան ճարող, բայց հացագործին ու նպարավաճառին գոռոս մատաղի կարգացող կարգ մը ազգամէի աղաները:

Տունէ տուն պտտելով բարեկամ ընտանիքները իրար ձգող կարգ մը կնիկ — ապա խառնակիչները:

Վերջապէս, շաբաթը անգամ մը, «Աս նպաստ է, առ նուէր է» ըսող ու խանութ խանութ պտտելով ժողովուրդին վրայ բեռ եղողները՝ ա՛յ բոլորովին ՀԱՄԸ ՓԱԽՈՒՑԻՆ:

ՄԱՆՐ ՄՈՒՆՐ

ՕՁԸ ԻՔՐԵՆԻ ԿՍՏՈՒ

Գիտական հանդէս մը կը գրէ թէ Գեր-
սիկայի մէջ օձը իւրիւ կատու կը գործածեն :
Գրեթէ ամեն տուն կը գտնուի եղեր ժխտո-
յալ բոլոր օձէն մէկ երկու հատ : Այս օձը
տօնավաճառներու մէջ մինչև 6-7 ֆրանքի կը
վաճառուի ու մեծ շահ կընեն վաճառողները :
ժառանգորդները : Թիպոյա բոլոր օձէն
կանգուն երկայնութեամբ պզտիկ օձ մըն է ,
որ թունաւոր չէ և մարդու չի դաչիր : Առ-
տուրնէ մինչև իրիկուն տան սանգուղքին վը-
րայ կը բնանայ առանց բնաւ նայելու անց-
նող դարձողին վրայ . իսկ երբ իրիկուն բլլայ
տանը շորս կողմը կը սկսի պտտիլ մինչև ա-
ռաւօտ և մուկերը բռնելով կը սատկեցնէ :
Այն տանը մէջ որ այս օձը կը գտնուի , կա-
րելի չէ եղեր մուկ մը գտնել : Այս գար-
մանալի անասնիկը շատ դիւրաւ ընտանեա-
լով անեցիկներուն , երբէք տեղ չի փոխեր ,
ու մինչև իսկ եթէ տեղ մը նետուի կամ գող-
ցուի , վերջապէս ճամբան կը գտնէ , կը փախ-
չի ու իր բնակած տունը կը վերադառնայ
եղեր :

800 ՔՐԵՆՔԻ ՎԱՅՍ ՄԸ

Անգամ մը Բարիդի մեծախարթամ ա-
պարանքի մը մէջ մեծ պարահանդէս մը կը
տրուէր , ուր հաւարուած էր հարուստ , աղ-
նուական և փափկասուն տիկնանց բազմու-
թիւն մը : Պարերը սկսելէ քիչ մը ետքը հա-
րուստ և աղնուական երիտասարդ մը մեծա-
րանքով կը մօտենայ տիկնանց հաշտ գիրա-
սանուհի Սարա Պէրնարի ու կըսէ .

— Տիկին , եթէ հաճիք ինձ հետ պարելու
չնորհքն ընել , երախտապարտ կընէք զիս :

Սարա Պէրնար չի մերժեր այս առա-
ջարկը , բայց տեղէն ալ չի շարժիր :

Երիտասարդը կը յարէ . — Կարծեմ թէ
կը վարանիր :

— Ո՛հ , պարոն , չեմ վարանիր . միայն
կուզեմ հասկնալ թէ կրնա՞ք վճարել իմ ու-
ղելիք գինս :

— Չեր ուղելիք գինը մի . . . կըսէ ե-
րիտասարդը զարմանքով :

— Այո՛ , կը շեշտէ դերասանուհին .

— Չարմանալի՛ բան . . .

— Չարմանալի ի՞նչ կայ որ , արդեօք
լաւ չըմբռնեցի՞ք :

— Բայց ես դձեղ չ'աղաքիմ ճարտարացի :

— Լաւ , ես ալ կուզէի գիտնալ թէ
այդ խաղին համար որչա՞փ պիտի վճարէք :

Երիտասարդին զարմանքը կը սաստկա-
նայ ու կը յուսելու .

— Ներեցէք տիկին , կարծեմ թէ թիւ-
րիմացութիւն մը կայ . կա՛մ ես չեմ կրնար
հասկնալ և կա՛մ դուք չէք կրնար հասկնալ :

— Ես շատ պարզ կը խօսիմ , արդ ես
ձենէ ներում խնդրել պարտիմ , որովհետեւ
չեմ կրցեր լաւ հասկնալ . քիչ քան որ 600
ֆրանք պիտի ուղէի . հիմա 800 պիտի ու-
ղեմ , վասն զի մէկ քատրիլը 600 , իսկ մէկ
պայսը 800 ֆրանքի կը խաղամ , ահա ա-
տնք են գիները . հիմա դուք այդ խաղերուն
որը կ'ուզէք խաղալ ինձ հետ , եթէ վախ՛
800 ֆրանք պիտի վճարէք , և կանխիկ , որ-
պէս զի տեղէս շարժիմ : Պէտք է գիտնաք աղ-
նիւ պարոն , թէ երբ ես կուզեմ պարել ,
միմիայն աղքատաց օգտին համար կը պարեմ .
և այս որոշեալ գիներէն սանդիմ մը իսկ
ղեղչել կարելի չէ :

Երիտասարդ աղնուականը յիշելով Սա-
րա Պէրնարի այս աստիճան աղքատասիրու-
թիւնը , կը վճարէ 800 ֆրանքը ու մեծ աշ-
խուժով վախ՛ մը կը դառնայ վեհանք գե-
րասանուհիին հետ :

ԳՕԳԱՐՃԱ

Բազար իրթէսի կիւնիւ , վարնանըն
պաղլար արասընտա վաղը Այաղմանըն
եօրթուսովէ բանայըըը օլտուղունտան .
վարնա է հալիսինին հէման պէօյիւք պիր
դըսմը եէվմի մէղքիւր սապահըըը Գո-
գարճայա չիթապան օլմուշըըը : Անճադ ,
սաիր սէնէլէրտէ օլտուղու կիպի , այաղ-

մայա եագըն պուլունան պիր թաղըմ պաղլարըն՝ սէյիրճիլէր թարափընտան չիննէնիպ պօզուլմասընա մէյտան վէր-մէմէք իչիւն, պու սէնէ, էյլէնճէլէրին՝ պաղլարտան տըշարը պիր օվատա իճ-րասընա միւսաատէ օլունմուշ իտի: Պի-նան ալէյճ էհալի՝ Այաղմայը զիրայէթ իթտիքտէն սօնրա կէրի տէօնիւպ, պաղ-լարա եագըն օվատա թօվլանմըշ տըր:

Մէյքիւր օվանըն մէնդարէսի հէր նէ գատար կայլթ լաթիֆ վէ էհալինին ըհաթ իթմէսինէ էլվէրիչլի իտի իտէ տէ, անճագ, ալաճ տէնէլէն տէօվլէթ-լիտէն պիր էսէր կէօրլունմէտիլինտէն, վէ չտորը տէնիլէճէք եալընդ նիւմու-նէլիք պիր ուֆագ գահվէ թէնթէսին-տէն պաշգա պիր կէօվլէլիք պուլուն-մատըղընտան, սէյիրճիլէր աղչամա գա-տար կիւնէշ ն գարշըսընտա գալրուլ-տուլար տէսէք միւպալաղա իթմիշ օլ-մայըլ:

Փարա գազանմագ արզու իտէն գահ-վէճիլէր՝ էկէր պիր իքի չտորը գուր-մուշ օլտալար իտի, օ կիւն էրէյիճէ ախ-ղուլթա իտէպիլիլիլէր իտի: Հէրնէ հալ իտէ, կէլէճէք սէնէ պու նօթթայը նա-պարը տըղգաթա ալմաղա ունութմա-մալարընը թափսիյէ իտէրէք, բանայը-րըն մաֆի պիր մահալինտէ օթուրմուշ օլան պիր ֆամիլեանընդօնուշմալարընը տիննէյէլիմ:

— Մայրիկ, քէպապին համար կը-րակը վառե՞նք:

— Կայնէ նայինք եալրում, հոս տիր-լիկ պիտի տա՞ն նստելու:

— Քա մայրիկ, միւսիւր Զինթօը ու միւսիւ խունին դէպի հոս կուգան կոր:

— Շնորհքով տալրանմիշ եղէք:

— Բարեւ ձեզ:

— Ուշ, Աստուծոյ բարին, միւսիւ խու-նի, հրամանցեք ինչպէս էք:

— Շնորհակալ ենք Դեզդիկ հանրմ: Պուք ինչպէս էք օրիորդ:

— Մէրօի կընեմ միւսիւ:

— Ան չէ ամա, ինչու այսչափ հե-ռուն նստեր էք:

— Ինչ ընենք զաւակս. հիմա ան ը-սի եա, նայինք հոս ալ պիտի կրնա՞նք նստիլ. անգաստան կը պտտինք կոր. աս իւշիւնճիւ տեղ փոխելինս է:

— Պատճառը ի՞նչ է որ:

— Քա ճանրմ, թամամ քի տեղ մը նստեր էինք, էշու առապայով թախըմ մը ֆամիլեա քովերնիս եկան ու առա-պան արեւին դէմ սիւրէռ ըռնելով՝ ա-նոր քովիլը նստան. խօսքս անոր՝ էշն ալ անոր թէքէռլէխին կապեցին. ինչ է նէ, հայտէ ըսենք քի աղ բան մը չէ. ֆախաթ շունչանորդի հայվանը անգիէն պաշխա էչէկ մը տնտնալուն պէս զուալ մըն է կը ձգէ ու առապան դէպի վրա-նիս բերելու տալապ կընէ. հոգի՛, երկու չիֆթ լախըռուը չես կրնա՞ր ընել. հե-ռուէն էշու մը ձայն առաւ մի, կէնէ կը զուայ կոր. ասոր համար ելանք պաշ-խա տեղ մը գացինք, ու թամամ քի տեղաւորուեր էինք, կէնէ էչէկ առա-պասիով թախըմ մը եկան քովերնիս նստան. հանկէց ալ ելանք:

— Ես ըսի եա, բանայիրը ամեն տար-ուան տեղը ըլլար նէ՝ առապաները պա-ղերէն դուրս կը ձգէին տէ՝ հալիւը ա-սանկ թաճիլ չէր ըլլար:

— Այդ պէս է օրիորդ:

— Այդ զուաներուն ձայնէն գլուխ-նիս ցաւ առաւ. գիտես քի բանայիրին տալուլ զուռնան անոնք են:

— Քա հապա անոնց թրիքին հոտը. աղթըգ գաբուլարը դաբայօր:

— Նայինք դուք մինչև հիմա ինչ-պէս ժամանակ անցուցիք, միւսիւ խունի:

— Մենք ալ շնորհքով տեղ մը չի գը-տանք որ նստէինք, 30—40 հոգիէնա-ւելի չի պարտիող թիւլի պէս բարակ թէնթէլն տակն ալ չի նստուիր կոր. արեւը դարձեալ կայրէ մարդս:

— Ուստի մինչև իրիկուն վեր վար չափեցինք:

— Քա աղջիկ, սա դիմացէն անցնող կէնճեքը գլխով աշնալըխութիւն կընեն կոր մեղի, որո՞նք են:

— Մայրիկ, չի ճանչնայիր, ինթուս հանրմենք են:

— Հիշ չի ճանչցայ, բէք փոխուեր են. ինչո՞ւ աճապա .

— Փոխուած չեն. արևուն տաքէն ու թօղէն երեսնուն փութորա՞ն ու գօգուէ՞մը գացեր է տէ քու աչքիդ. անճանաչ կեանքան կոր :

— Սանկ ըսէ, չէ՞նէ պիտի ճանչնայի .

— Մայրիկ, աչքդ լոյս, սանկ նայէ : էշու առապայով թախում մըն ալ քովերնիս եկան .

— Վույ կածակի գան պիլէքիմ, հոս ալ տուիկ չպիտի տան .

— Հատէ երթանք տէրէ պոյին նըստինք .

— Տահա նէլէր. հոն ալ պաշխա հոտեր պիտի առնենք : Ասորուան զէվքը՝ սա մօտերը պաղ ունեցողները կը հանեն կոր ծառերուն տակ նստելով :

— Ախ հիմա մենք ալ պաղի մը մէջ ըլլայինք տէ թագէ եափրախով տօլմա մը գնէինք .

— Խե՞նդ ես ի՞նչ ես քա աղջիկ, հետըս բերած աննման քէպուսպ չեմ կըրնար կոր ուտել՝ ինծի տօլմա գնելու կելլայ կոր : Հէմ ձեզի բան մը ըսե՞մ. էշը տինկիլին կապուեցաւ, հիմա ուր է նէ մախամը կը շտկէ. հիշ կերակուր չի սահմանենք տէ չէնք շնորհք տուններնիս երթանք ուտենք : Ի՞նչ կուզեն ըսեն, ծառ մը, կէօլկէլիս մը, եախօտ շնորհքով չատըռ մը օլտուն չունեցող բանայիլը փարա մը չըներ . տէյէրէք՝ խանէլէրինէ ալտէթ իտէրլէր :

ԿԵԼ ԳԱՆԹԱՐԱ՝ . .

(Շարունակութիւն)

— (Բոլորտիքը նայելով, զարմացմամբ) ներեցէք, պարոն . . .

— Ա՛. . . հաղար ներողութիւն օրիորդ, սխալեցայ . . . մի՛ վշտանաք : Հաճեցէք նըստիլ ու կշռուիլ :

— Արգեօք ուրիշ օրիորդներն ալ պիտի կշռէք :

— Քիչ շատ ազգային կեանք ունենալով, ճամբուս վրայ հանգիպող երկսեռ ազգայինները միայն պիտի կշռեմ :

— Բայց ես նոյն ասպարէզի գործունէութիւնէն հիմա ձեռք քաշած եմ :

— Ատիկա գիտեմ, օրիորդ, գիտեմ նաև

թէ վարձքերնիդ ալ առած էք. այսինքն չար լեզուներու կողմէ բամբաստուած ու յանգիմանուած էք . ի մի բան իրաւացի հոգեր ու վիշտեր ունիք . սակայն ինչպէս որ ըսի, պէտք է կշռուիք : Նստեցէք, (կը նստի) ահա լըմընցաւ (կշռելով) վաթսունը հինգ . . .

— (դող ելած) Ի՞նչ կըսէք սխալ չըլլայ .

— Արգարե ես ալ կը զարմանամ թէ ինչո՞ւ այսչափ ծանր կը կշռէք . բայց երբ մտածենք թէ հոգերով ու վիշտերով ծանրաբեռնեալ էք, որոնցմէ ազատելնիդ ՚ի սրտէ կը մաղթեմ :

— Շնորհակալ եմ ձեր անկեղծութիւնէն Պ. Բոժոժիկ :

— Չարժեր օրիորդ :

— Երէկ ըսին ինձ թէ այդ տեսակ հոգեկան ճնշումներէ ազատելու համար աղօթքով մը դիմել պէտք էր . ես ալ նոյն բանը ըրի . այսօր արշալոյսին աղօթող տիկնոջ մը դիմեցի որ ինձ յանձնեց պզտիկ թուղթ մը, պատուիրելով որ դայն եռանկիւնածաւ կարուած կաշիէ պզտիկ պահարանի մը մէջ դրնելով վրաս պահեմ :

— Ներեցէք համարձակութեանս օրիորդ, կրնամ ա՛նգամ մը աչքէ անցնել դայն. չելլայ վտանգաւոր բան մը եղած ըլլայ :

— Կրնաք տեսնել, անսահման վստահութիւն ունիմ ձեր վրայ. (սաղմ) ահաւասիկ .

— Շնորհակալ եմ. (կաղաղայ) «Բա՛րձ յինէն ողորմած, զանբերելի ծանրութիւնս . . . Աւարեա՛ միշդ յաղթող, զիս խաբողին հաճութիւնս . . . արգարե աղւոր նոռախա է տրւեր : Կը մաղթեմ որ անոր օգուտը վայելէր և պիտի վայելէր, վասն զի նարեկացիին աղօթքները միշտ ազդեցիկ են :

— Շնորհակալ եմ Պ. Բոժոժիկ, մնաք բարով :

— Երթաք բարով, օրիորդ : Ե՛՛ ձանձմ, կէլ գանթարա . . . կէլ գանթարա . . . օ՛. . . Տէր Հա՛յր, ո՞ւր կը վազես ատանկ, հրամմէ նայինք .

— Ի՞նչ է ան .

— Խանթար է. հրամմէ նստէ՛ որ կշռուիս :

— Հիմա ժամանակ չունիմ, աղքատի մը նորածինը պիտի Մկրտէի, ըսին թէ հարուստ խաթուն մը մեռեր է, ուստի կնուները ետքի ձգելով՝ ննջեցեալին հոգոց ըսելու կերթամ :

— Աժէրիմ տէրպապա, մկրտելէք ետքը հոգեոցը ըսէիր նէ չէ՞ր ըլլար :

— Ա՛խ Պ. Բոժոժիկ, մէկը գիտես, մէկը չգիտես . կը բամբաստուիմ, հասկցա՞ր, հոս

բաժնատանքը շատ է :

— Բաժնատանքէ կը վախնա՞ն կոր .

— Որովհետեւ , ծայրը « յիշեալ լիջիքդին կը դաշի :

— Ա՛խ , ձեր այդ յիշեալ լիջիքը , յիշեալ լիջիքը . . . բայց ինչ որ է . . . հիմա նստէ որ շուտ մը կշռեմ :

— Կշռեմ , կշռեմ կըսես կոր ամա , քանի՞ փարա վրայ պիտի տաս :

— Հէ՞ . . . ինչ ըսիր . . . վրայ ալ պիտի տանք . . . տալիքդ 5 փարայ է . . .

— 5 փարան կուտամ ամա , ածուխ պիտի առնեմ , ա՛ն ալ մէկտեղ կշռելու ես .

— Երեսիդ ըսել չըլլայ ամա , իրաւէ եղբոր որ քեզի համար կծծիութեան մարմնաւորումը ըսեր են : Հայտէ , նստէ որ կշռուիս . (կը նստեցնէ) կը քաշեմ կոր . մի երեւար . (կշռելով) իննսունը ի՛նչ . . .

— Ծօ՛ նշովի՛ց ծնունդ , ածուխին յուշադր հետս չէ որ 99 քիւօ կը կշռես .

— Անիկա ալ հետդ ըլլար նէ՛ 180 քիւօ պիտի գայիր : Հիմա տառադ առնենք նէ կը հասկնաս քանի քիւօ աւաճի ըլլալդ . 20 քիւօ կծծիական ծանրութիւնդ , 20 քիւօ մանրաբանութեան ծանրութիւնդ , 20 քիւօ ժամկոշին , տնտեսին , տիւրկերին ու սուճիին ըրած կշտամբանքներուդ ծանրութիւնը . 20 քիւօ պոռալ կանչելուդ ծանրութիւնը ու 19 քիւօ ալ արարողութիւնները լիւստելու ծանրութիւնդ . մնացած աւաճիկն ալ դուն ես : Հրամմէ 5նոցը տուր :

— 105 զորու 5 փարա տուր ինծի որ նաբօլէոն մը տամ .

— Ատ ի՛նչ ըսել է .

— Որովհետեւ նաբօլէօնի այսօրուան բիւշցան 105 և 10 փարայ է :

— Քեզի բան մը ըսեմ տէրպապա , ես քու 5նոցէդ վազ անցայ . պարապ տեղը ժամավաճառ պիտի ըլլանք մինչև որ 5նոցը ձեռքէդ առնենք . հոգիս պիտի հանես , ուրեմն երթաս բարով . հասկցանք , անգամ մը որ անկուտի կշռել սկսանք , մինչև վերջը ասանկ պիտի երթանք :

— « Բեօթէդ էր . — 2է՛ , « Գարամպօլդ էր .

— Ես « տիւշէշո նետեցի . — Տիւշէշին կը զարնուիս , հէփ-եէք էր . — Անցած օրուընէ 50 սանգիմ կուղեմ . — Անանկ բան չի կայ .

— Ի՛նչ շուտ մոռցար , աշխարհագրութեան դասին ատենը « ինծի 50 սանգիմ փոխ տուր , Գառնիկին հետ պեզիկ պիտի խաղամդ ըսողը

դուն չէի՞ր . — « Բեօթէդ էր : — 2է՛ , Գարամպօլ էր . . .

Ըհա այսպէս աղմուկով ընթերցարանէն դուրս կը նետուէին խուճաք մը . . . դըպրոցական պարոններ .

— Ծօ , տղաքներ , բոժոժիկը եկեր է .

— Հրամմեցէք , պարոններ , խանթարն ալ կատուեր է .

— Մեզի՞ ալ պիտի կշռես . . .

— Այո , որովհետեւ արժանի էք կշռուելու . ա՛ն չէ ամա , երբ տնօրէննիդ իմանայ որ , դուք ընթերցարանին մէջ թուղթ , պիլարտօ և թավուլ կը խաղաք , իրարու հետ կը կռուիք , ի՛նչ կըսէ .

— « Մեշաննիֆ » ներ կըսէ մէկ թարափ կելլայ .

— Գրիշ բան չը՞սեր .

— Ոչ , որովհետեւ ժողովրդեան մէջ իր մասին կը ջատահագովենք :

— Զրտէ՛ք , թէնճիրէ եռվարլանմըշ , դափաընը պուլմուշ .

— Բոժոժիկ մեր միւսին ալ պիտի կշռու՞.

— Հարկ չը կայ , հա ձեր ամբողջութիւնը կշռուեր եմ , հա անիկա : Սանկ բաթըռտըսըղ ամէնքնիդ մէկանց նստեցէք նայիմ . . . հա չէօլէ . խանթարիս նստարանը նեղ եկաւ ամա՛ մնաս չունի . իրար բռնեցէք որ վար չիյնաք . (ֆաշելով) 199 . . .

— Ըսել է որ մեր միւսին ալ այդչափ է .

— Ատոր տարակոյս չկայ . . . մինակ ձեր սորվածները , առած կրթութիւննիդ այլովքն հանգերձ ձեր միւսինին առաւելութիւններն են , որ տառան կը սեպուին և 198 քիւօ 199 կռամ կըքաշեն : 5նոցը տուէք տէ ժամ առաջ չըջանաւարտ ելլելնիդ նայեցէք .

— Փարա շունինք . ունեցածնիս պիւֆէն ձգեցինք :

— Արդէն ատիկա գուշակեցինք . ի՛նչ ըսեմ , ուսկի՛ց ալ գէմերնիս ելաւ առաջին անգամ սա խուկակը , որ զմեզ ասանկ սիմօսանւրդ ձգեց . ինչ որ է . իրիկունն ալ վրայ հասաւ , ծեծ մը չի կերած՝ ասկէք կծիկը դնելու ենք , որովհետեւ հոս յեղափոխականներն անգամ չեն կրնար եղեր 24 ժամ շունչ առնել ,

Այս ըսելէ ետքը մնաք բարովը կոխեցի ու Նէմցէ իսկէլէսիէն շոգենաւ նետուեցայ , Սիլիսդրէ երթալու համար :

